ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ »ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ քննադատական և վերլուծական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Ռուբինա Գևորգյան

ԴՊՐՈՑ՝ Վարդենիսի թիվ 4 հիմնական դպրոց

2022թ.

ՎԱՐԴԵՆԻՍ

Բովանդակություն

Ներածություն_____3

Գրական ակնարկ_____4

Փորձարարական հետազոտություն_____7

Խմբի նկարագիր_____8

Հետազոտության ընթացք_____8

Փորձարարական դաս 1_____9

Փորձարարական դաս 2_____10

Տվյալների մշակում և վերլուծություն_____11

Եզրակացություն_____12

Օգրագործված գրականության ցանկ_____14

Հավելված

Դասապլան 1

Դասապլան 2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցականների անձի ձևավորման համար շատ կարևոր նշանակություն ունի պատմություն առարկան:Պատմության դասավանդումը նպատակ ունի աշակերտներին պատկերացում տալ,մարդկային քաղաքակրթության զարգացման ուղիների և նվճումների մասին,ցույց տալ, թե ինչպես, բազմաթիվ սերունդներիր ինչպիսի տքնաջան ջանքերով է ստեղծվել այն աշխարհը,որում մենք ապրում ենք:

Ճիշտ է ասված,որ պատմությունը ժողովրդի հավաքական հիշողությունն է, նրա կենսագրությունը:

Յուրաքանչյուր ուսուցիչ ձգտում է դասը արդյունավետ կազմակերպել և անցկացնել ։Իմ դասավանդման ընթացքում նկատել եմ սովորողների մոտ ինքնուրույն մտածողութան, վերլուծական մտքի , պատմական մտածողության ,քննադատական մտածողության բացակայություն ։

Եվ առաջնահերթ եմ համարում սովորողների մոտ զարգացնել քննադատական մտածողությունը ։Քննադատական մտածողության կիրառությունը պարտադիր պայման է որակյալ կրթական համակարգի ապահովման, ինչպես նաև բարելավման և զարգացման համար:Հետազոտական աշխատանքը գրելիս իմ առջև դրեցի հետևյալ նպատակը՝ զարգացնելով սովորողների մոտ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտությունը , որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում:

Թեման շատ արդիական է, և արդի մանկավարժության նպատակն է ուսուցման գործնթացը դարձնել այնպիսին,որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցներ: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են ավելի անկաշկանդ ու ինքնուրույն , նրանց մոտ ձևավորվում է հետաքրքրություններ և կարողություններ:

Գրական ակնարկ

Քննադատական մտածողություն (անգլ.՝ critical thinking) ապացուցումների համակարգ , որը կիրառվում է է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված

եզրակացություններ[*1], և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները։Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝ կանխորոշում են ուսումնառության նպատակները, հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը, նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ, զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը: Սուխոմլինսկին սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է համարել

Քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման հիմնախնդիրները դիտարկել են 20-րդ դարի վերջերին ԱՄՆ-ի հոգեբանմանկավարժներ Ջ. Լ. Սթիլը, Ք. Ս. Մերեդիթը, Չ. Թեմփլը, ինչպես նաև Բ. Բլումը, Ղ. Հուսլպերնը, Ղ. Քլուսթերը և ուրիշներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման խնդիրներին ու արդյունավետությանը ավելի ուշ անդրադարձել են ժամանակակից մանկավարժներ Գ. Սելեվկոն, Ի. Զագաշնը, Ս. Զաիր-Բեկը, Ի. Մուշտավինսկայան, Մ. Կլարինը, Վ. Կուկուշինը, Վ. Միժերիկովը և այլք։

Հոգեբան Դ. Ֆ. Հալփերնը (անգլ.՝ Diane F. Halpern) դիտարկում է քննադատական մտածողությունն իբրև ճանաչողության այնպիսի մեթոդների կիրառություն, որոնք տարբերվում են վերահսկողականությամբ, հիմնավորվածությամբ և նպատակասլացությամբ, մեծացնում են ակնկալվող վեջնարդյունքի ստացման հավանականությունը։ Այս մեթոդները կիրառվում են առաջադրանքների, խնդիրների կատարման, հետևությունների ձևակերպման,հավանականությունների գնահատման և որոշումների ընդունման ընթացքում և պահանջում են այնպիսի հմտություններ, որոնք հիմնավորված և արդյունավետ են տվյալ իրավիճակի և առաջադրանքների տվյալ խմբի համար[*2]:

Որպես քննադատական մտածողության դրսևորումներ՝ մենք կարևորում ենք պատճառահետևանքային կապերի վերլուծության, փաստերն ու երևույթները գնահատելու կարողությունները: Վերջիններս համարվում են «պատմական մտածողության» հայեցակարգի կարևոր բաղկացուցիչներ : Որպես ներգործության միջոց՝ նախընտրելի է կիրառել բաց հարցադրումների հետևյալ տեսակները՝ Ինչու՞, Ի՞նչ հետևանքների է հանգեցնում, Ինչպե՞ս եք գնահատում…

Ընդ որում այդ երեք տեսակի հարցերի միջոցով կառուցվում է պատճառահետևանքային կապերի տրամաբանական ամբողջական մեկ շղթա: Նշեմ նաև, որ այս հարցադրումներին պատասխանելիս աշակերտների իրականացրած ճանաչողական գործունեությունը համապատասխանում է Բլումի մշակած աստիճանային համակարգի վերին աստճաններին և ենթադրում է գնահատում, աստիճանակարգում, արժևորում: Ինչպես նաև Սանդերսի հիշողություն փոխակերպում-մեկնաբանում-կիրառություն-վերլուծություն-համադրում-գնահատում համակարգում այս հարցերը դիտվում են իբրև հարցադրումների ամենաբարձր մակարդակ*4:

Վերադառնալով դասավանդման մեթոդիկային՝ Անուրադհա Գոքհեյլը ուսումնասիրել է, թե արդյոք քննադատական մտածողության հմտությունների ձեռքբերումը կախված է դասավանդման և սովորելու մեթոդից: Նա առանձնացրել է սովորելու երկու՝ անհատական և համագործակցային մեթոդ (individule and collaborative methods): Հետազոտության արդյունքում Գոքհեյլը պարզել է, որ այն ուսանողները, ովքեր մասնակցել են լսարանային քննարկումներին, խմբային աշխատանքներին, այսինքն նյութի համատեղ յուրացման գործողություններին, ի տարբերություն մյուսների, զգալիորեն լավ ցուցանիշ են դրսևորել քննադատական մտածողությունը չափող թեստերը լրացնելիս (Gokhale, 1995):

Մտածողությունը՝ որպես ակտիվ ու նպատակաուղղված գործընթաց, սկսվում է առաջադրված որոշակի հարցերից: Այս առումով կարևոր է հարցադրումներ անելը: Բաց հարցերը ունեն մի շարք առավելություններ փակ հարցերի նկատմամբ: Դրանք թույլ են տալիս առանց որևէ սահմանափակման արտահայտել սեփական տեսակետը, առանձնացնել ամենաէականը, բարձրացնել այնպիսի խնդիրներ, որ անգամ հարցադրողի մտքով չի անցել, բացահայտել առկա հակասությունները, երևույթներն ու փաստերը դիտարկել լրիվ այլ տեսանկյունից:

Ըստ Ֆ. Գրոյսերի (1964)՝ հարցերը պետք է լինեն հասկանալի, բովանդակալից, հակիրճ, բնական ու պարզ լեզվով շարադրված, մտածելու տեղիք տվող և ներգրավող,

«փաստային» և «մտածել ստիպող» հարցերի միջև հավասարակշռություն պետք է լինի:

Աշակերտների համար հարցադրումներով զրույցը հետաքրքիր և հաճելի գործընթաց է, հատկապես քանի որ ճիշտ պատասխանները նրանց վստահության և հաջողության զգացողություն են պարգևում:

Փորձարարական հետազոտություն

Մինչ հետազոտությունը սկեսելը ես նկատել եմ ,որ իմ դասավանդման ընթացքում իմ սովորողների մտածողությունը ունի փոփոխության կարիք: Իմ դասավանդման ընթացքում նկատել եմ սովորողների մոտ ինքնուրույն մտածողութան, վերլուծական մտքի , պատմական մտածողության ,քննադատական մտածողության բացակայություն :

Քննադատական մտածողությունը բարձրացնելու համար հետազոտության օբյեկտ ընտրել եմ մեկ դասարան որտեղ կատարելու եմ փորձարկում :

Ուսումնասիրություններս գրականության ասպարեզում ցույց է տալիս որ ,Հարցադրումների մեթոդով հնարավոր է զարգացնել քննադատական մտածողություն :

Հետազոտական գործընթացն է իրականացնելիս հանդես եմ գալիս որպես դիտարկող :

Իրականացնելու եմ մեկանգամյա դիտարկում ,հավաքագրել եմ ուղղակի և անուղղակի և միջնորդավորված տվյալներ:

Որպես վկայություն օգտագործել եմ սովորողների գրավոր աշխատանքները :

Կիրառել եմ հետևյալ մեթոդները

1. դիտարկում
2. թեստավորում

Իրկանացրել եմ փորձարկում 2 դաս

Արյունքները վերլուծել եմ ,ձևակերպել հետևյալ մեթոդներով՝

Գրանցում

Համեմատում

Կատարել եմ եզրակացություն որում վերլուծել եմ փորձարկման արդյունքները :

Կազմել եմ հետազոտության տեքստային տարբերակը ելնելով հետազոտության օրինակելի կառուցվածքից և ներկայացման պարտադիր բովանդակային պահանջներից

Խմբի նկարագիր

Հետազոտությունը կատարել եմ Վարդենիսի համար 4-րդ հիմնական դպրոցի 7 -րդ դասարանում, որտեղ սովորում են 19 աշակերտ։Նրանցից 4-ը աղջիկներ են,իսկ 15-ը՝ տղաներ։

Ունենք տարբեր մակարդակի գիտելիքներ ունեցող աշակերտներ։

Հետազոտության ընթացք

Հետազոտական աշխատանքը կատարել եմ 2 դասրի շրջանակներում։<<Վարդանանց պատերազմը >>,<<Ավարայրի ճակատամարտը>>։

Դասերն անցկացնելիս իմ առջև դրել եմ մի քանի խնդիրներ դրանք են՝ ընկալել հաղորդվող նյութը ,կատարել բաց առաջադրանքներ որոնց միջոցով սովորողները կկարողանան աղբյուրների հիման վրա հարցադրումներ առաջ քաշել և զարգացնել։Կարողանալ վերլուծել անցյալի շարադրանք,բացատրել ,թե ինչու տվյալ իրադարձությունը զարգացել է հենց այդ կերպ։Կարողանան կառուցել պատճառահետևանքային փաստարկներ վերլուծական տարբերակումներով ։

Փորձարարական դաս 1

Այս դասի անցկացման համար ընտրել եմ մի 2 մեթոդներ, ,հարցադրում , զրույց ։մտագրոհ

Դասի առաջնահատվածը, այն է՝ խթանման փուլը, սկսվում է ակտիվացնող որևէ վարժությունով։Մտագրոհ ,կամ հարց ու պատասխանով։Դասի այս հատվածում աշակերտների ուշադրությունը հրավիրեցի այն հարցին, Արդյո՞ք ճիշտ են համարում հայերի առերես զրադադաշտականությունը ընդունելը ։Իսկ եթե՞ չնդունեին, ի՞նչ կլիներ։Այս հարցադրումները պատահական բնույթ չունեին: Տրված հարցադրումները հստակ կապ ունեին մեր հետազոտական թեմայի, այն է՝ բաց հարցերը նպատակ ունենալով՝ խթանել աշակերտների քննադատական մտածողության զարգացումը։Կշռադատման փուլում անց կացվեց զրույց, որը օգնեց ամբողջացնել աշակերտի ստացած գիտելիքները դասից: Իմ կողմից օգտագործվեց նաև սովորողների ինքնուրույն մտածողության և երևակայության զարգացումը խթանելու համար քննարկման հարցը, և լսեցի աշակերտների հիմնավորումներն ու մեկնաբանությունները: Հետազոտական աշխատանքն իրականացնելու, ինչպես նաև դրա չափողականությունն ապահովելու համար աշակերտներին տրվեցին հարցաթերթ՝ բաղկացած 10 հարցից, որոնք բոլորն ունեին բաց բնույթ: Դասի ավարտին գնահատվեցին առավել ակտիվ աշակերտները, և տրվեց նոր տնային հանձնարարությունը:

Փորձարարական դաս 2

Հաջորդ դասը դա <<Ավարայրի ճակատամարտն>> է: Դասանյութը ներկայացնելու համար իմ առջև դրել եմ մի քանի նպատակներ, դրանք էին՝ իմանալ Ավարայրի ճակատամարտի պատմական նշանակությունը և կարողանալ գնահատել Վասակ Սյունու դերը պատմության մեջ ։

Դասի սկզբում աշակերտների հանձնարարեցի զույգերով աշխատանք:Աշակերտներին հանձնարարվեց տվյալ դասի թեմայի վերաբերյալ փոխադարձ հարցադրումներով քննարկել թեման ,քննարկամն արդյունքում սովորողները անկաշկանդ արտահայտում էին իրենց տեսակետները թեմայի վերաբերյալ ։

Դասի երկրորդ փուլում ամրապնդեցինք գիտելիքները ։

Դասի կշռադատման փուլում աշակերտներին հանձնարարվեց, որ նաև իրենք կազմեն բաց հարցեր և տան իրենց ընկերներին՝ փորձելով զարգացնել քննադատողական մտածողությունը: :

Դասի ավարտին գնահատվեցին առավել ակտիվ աշակերտները, և տրվեց նոր տնային հանձնարարությունը:

Տվյալների մշակում և վերլուծություն

Ինչպես արդեն նշեցի իմ հետազոտական աշխատանքի կատարման համար թիրախային խումբ էի ընտրել դպրոցի 7-րդ դասարանի աշակերտներին: Հետազոտական աշխատանքի բնույթն ընտրելիս որոշակի մտավախություններ ունեի, քանի որ կային որոշակի կասկածներ դրանց չափելիության հետ կապված:

Հիմա խոսենք այն մասին, թե ինչու ընտրեցինք հենց դպրոցի 7-րդ դասարանը հետազոտական աշխատանք կատարելու համար:

Դասարանում սովորում է 19հոգի:Դնելով այս խնդիրը մեր առաջ՝ ցանկացա առաջնահերթորեն բարձրացնել աշակերտների քննադական մտածողության աստիճանը: Կարող եմ ասել, որ սովորողների կեսից ավելիի մոտ զարգացել է քննադատական մտածողություն: Սովորողներից 12-ի մոտ դրա զարգացվածության աստիճանը կբնութագրեմ միջին որակավորումով: Սակայն, ցավոք սրտի, 7 աշակերտների մոտ դրա զարգացվածության աստիճանը շատ թույլ է:

Դասերի ժամանակ կիրառած բաց հարցերը միանշանակ ազդեցություն ունեցան երեխաների քննադատական մտածողության զարգացման գործում:Դա փաստվեց հարակից առարկաներ դասավանդող ուսոցիչների կողմից, և որ ամենակարևորն է, ամեն դասից հետո աշակերտների լրացրած հարցաթերթիկների վերլուծությունից:

Կարելիէ ասել, աշակերտների տված պատասխանները հարցաթերթիկների բաց հարցերին ապացույնցն են այն բանի, որ նրանք կարողացել են իրենց միտքը ճշգրիտ կիրառել, կատարել համեմատա- վերլուծական աշխատանք և առավել բարելավել քննադատական մտածողության գործընթացը:

Փաստորեն հետազոտությունը ցույց տվեց, որ կիրառված մեթոդները աշակերտներին առավել լայն հնարավորություն են տալիս գաղափարները վերլուծելու, սինթեզելու և գնահատելու համար:

Եզրակացություն

Ամփոփելով ասենք, որ Հայոց պատմության դասավանդման ընթացքում կարևորում ենք այն հանգամանքը, որ սովորողը մտածի պատմական գիտության բովանդակության ու նշանակության մասին: Վերլուծությունները փաստում են, որ հնարավոր է

ուսուցման միջոցով զարգացնել քննադատական մտածողության հմտություններ: Այդ նպատակով նախընտրելի է բաց հարցերի կիրառումը: Դրանք ավելացնում են աշակերտների հետաքրքրությունը թեմայի նկատմամբ և կարող են մոտիվացնող նշանակություն ունենալ: Աշակերտը փորձում է առաջադրված խնդրի լուծման նոր ուղիներ փնտրել: Բաց հարցերը դրդում են աշակերտին փաստերի վերլուծության, զուգահեռների որոնման, ձևավորում են հստակ կողմնորոշիչ մոտեցում ընթացիկ թեմայի առավել կարևոր խնդիրների հանդեպ: Արդյունքում պատմական համապատասխան նյութի վերլուծության շնորհիվ աշակերտների մոտ ձևավորվում են փոխանցելի հմտություններ, որոնք թույլ են տալիս նրանց ցանկացած իրավիճակում անել հիմնավորված եզրակացություններ,

կանխատեսել հնարավոր հետևանքները, իսկ գնահատելիս լինել շրջահայաց, փաստերն ու երևույթները դիտարկել տարբեր տեսանկյուններից, չշտապել դատողություններ անելիս:

Հարցադրումների մեթոդն ունի գերագույն կարևորություն: Առանց դրա հնարավոր չէ զարգացնել յուրահատուկ հասկացողություն կամ այլ բարձր մտավոր հմտություններ: Այն ստիպում է աշակերտներին ինքնուրույն մտածել և ստեղծում է բարձրորակ, փոխանցելի գիտելիք:

Այն թույլ է տալիս աշակերտներին կիրառել իրենց ուսուցանվող հասկացություններն ու սկզբունքները, իսկ ուսուցիչներին հնարավորություն է տալիս այս կիրառությունը ստուգել և շտկել: Հարցադրումների շնորհիվ ուսուցիչները ստանում են նաև հետադարձ կապ ուսումնառության գործընթացի վերաբերյալ և «չեն կորցնում» աշակերտներին:Հետևաբար, ամփոփելով ներկայացնում ենք հարցադրումների՝ որպես դասավանդման մեթոդ կիրառելու առավելությունները՝

- Ցույց է տալիս թեմայի տրամաբանությունն ու առաջ անցնում՝ խրախուսելով ոչ թե անգիր անելը, այլ հասկանալը

- Ապահովում է, որ ուսումնառությունը կառուցողաբար հիմնվի նախկինում ստացած գիտելիքի վրա
- ստեղծում է փոխանցելի գիտելիք
- տալիս է ակնթարթային հետադարձ կապ (թե՛ ուսուցիչներին, թե՛ աշակերտներին) սովորելու գործընթացի վերաբերյալ
- դասի ընթացքը համապատասխանեցնում է աշակերտի տեմպին
- աշակերտների համար ակտիվ և հետաքրքիր գործընթաց է
- աշակերտներին թույլ է տալիս գործնականում կիրառել ձեր հաղորդած և նրանց կողմից վերջերս յուրացված գաղափարներն ու բառապաշարը
- վերհանում է սխալ գաղափարներն ու ենթադրությունները՝ թույլ տալով, որ տեղի ունենա «սովորածը մոռանալու» գործընթաց (այսինքն՝ ապահովում է ուսումնառության «ստուգելու և շտկելու» բաղադրիչը)
- մոտիվացնում է, քանի որ հնարավորություն է տալիս աշակերտներին հաջողություն գրանցել ուսումնառության ընթացքում
- անհատական հարցադրումների միջոցով ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել այն դժվարությունը, որին միգուցե հանդիպել է «փակուղում հայտնված» աշակերտը
- կարող է կիրառվել աշակերտին կարգապահ դարձնելու համար
- թույլ է տալիս ուսուցչին գնահատել ուսումնառությունը

խրախուսում է բարդ մտածողության հմտությունների զարգացումը:

Գրականության ցանկ

1. http://evolkov.net/critic.think/basics/delphi.report.html

2. Խաչատուրյան Ռ., Աշակերտների քննադատական մտածողության պատմության դասավանդման ընթացքում, ՇՊՀ գիտական տեղեկագիր, N1, Պրակ Բ., 2019:

3. Հարությունյան Գ., Քննադատական մտածողության տեխնոլոգիան որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման միջոց
արդի դպրոցում, Ատենախոսության սեղմագիր,
Երևան, 2014:

4. Պետրոսյան Ա., Համակազմ դասարաններում սովորողների քննադատական մտածողության զարգացումը կարդալու միջոցով, Արցախի էլեկտրոնային դասարան:

5. Պետրոսյան Հ., Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, մոդուլային ուսումնական ձեռնարկ, Երևան, 2008:

6. Лернер И. Я. Развитие мышления учащихся в процессе обучения истории. М.: Изд.-во “Просвещение”, 1982.

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Ռուբինա Գևորգյան

Առարկա՝	Հայոց Պատմություն	Ամսաթիվ	04.10.2022թ.	Կիսամյակ	I	Դասարան	VII
Թեմա՝	Վարդանանց պատերազմը						
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, աշխատանքային տետր, քարտեզ, գծակարգեր, նկարներ, <<Վարդանանաք>> պատմավեպ						
Դասի նպատակը՝	Աշակերտները իմանան՝ • Ո՞վ էր Վարդան Մամիկոնյանը, Վահան Ամատունին • Ով էր Հազկերտ 2-րդը , Ի՞նչ քաղաքականություն էր վարում • Արտաշատի ժողովը • Ավարայրի ճակատամարտը						

Ուսուցման փաստեր,որոնք կվիճարկեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	Աշակերտը կարողանա. • Նկարագրել իրավիճակըԱրևելյան Հայաստանում 5-րդ դարի 1-ին կեսին • Բացատրել Վարդանանց պատերազմի պատճառներն ու հետևանքները • Գնահատել Վարդան Մամիկոնյանի գործողությունները • Վերլուծել ճակատամարտի պատմական կարևոր հետևանքը

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասի փուլերը	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Առանցքային հարցեր Կիրառվող մեթոդներ

5-10ր	Աշակերտները ողջունում են ուսուցչին և տեղավորում իրենց տեղերում, Հարցերի միջոցով անցածի կրկնություն	Ողջունում է աշակերտներին - Բացակա աշակերտներին է գրանցում Հարցերի ուղղում աշակերտներին	Աշակերտների ուշադրությունը կենտրոնացում է դասին Հարցերի պատասխանում	Ինչպիսի՞ն էր հայ նախարարության և հոգևորականության վիճակը թագավորության վերացումի վ հետո:
15-20ր	Ընթացք	Բացատրել հանձնարարությունը, - Շրջել դասարանում, օգնել և կառավարել անհատական աշխատանքները, - Ամփոփել հիմնական մտքերը, - Հարցադրումներ:	Ուսուցչի ուկնդրում, Խմբերի կազմում, Հարցերի կազմում, Խմբային աշխտանքի կատարում	Ինչու՞ արքունիքն <<աշխարհ ազիր>> անցկացրեց Հայկական մարզպանությունում: Ինչպե՞ս են պատմիչները ներկայացնում Արևելյան Հայաստանի վիճակը պարսկական տիրապետության սաստկացման շրջանում:
7-10ր	Ավարտ	Ուսուցիչը ուղղում է հարցեր աշակերտներին՝ դասի թեմայով Դասի ամփոփում: Կատարում է Միավորային գնահատում:	Հարցերի պատասխանում: Դասի ամփոփում:	Մեթոդնե՝ Զրույցի մեթոդ Հարցադրման մեթոդ
Տնային աշխատանք 3-5ր		Կազմել ժամանակագրական աղուսյակ		

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Ռուբինա Գևորգյան

Առարկա՝	Հայոց Պատմություն	Ամսաթիվ	05.10.2022թ.	Կիսամյակ	I	Դասարան	VII

Թեմա՝	Ավարայրի ճակատամարտը
Օգտագործվող նյութեր	Դասագիրք, աշխատանքային տետր, քարտեզ, գծակարգեր, նկարներ,
Դասի նպատակը՝	Աշակերտները իմանան՝ ❖ Ավարայրի ճակատամարտը ❖ Ավարայրի ճակատամարտի նշանանաբանը ❖ Պատմական նշանակությունը

Ուսուցման փաստեր,որոնք կվիճարկեն, որ ուսուցումը տեղի ունեցավ

Վերջնարդյունքները	Աշակերտը կարողանա. ❖ Նկարագրել Ավարայրի ճակատամարտի կռվող կողմերի դասավորո ❖ Գնահատել Վարդան Մամիկոնյանի դերը ❖ Վերլուծել ճակատամարտի պատմական կարևոր հետևանքը

Գործողություններ Ժամ/տևողություն	Դասի փուլերը	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Առանցքային հարցեր Կիրառվող մեթոդներ
5-10ր	Աշակերտները ողջունում են ուսուցչին և տեղավորում իրենց տեղերում, Հարցերի միջոցով անցածի կրկնություն	Ողջունում է աշակերտներին - Բացակա աշակերտներին է գրանցում Հարցերի ուղղում աշակերտներին	Աշակերտների ուշադրությունը կենտրոնացում է դասին Հարցերի պատասխանում	Ինչպիսի՞ն էր հայ նախարարության և հոգևորականության վիճակը թագավորության վերացումի վ հետո:
15-20ր	Ընթացք	Բացատրել	Ուսուցչի	Ինչու՞ արքունիքն

7-10ր	Ավարտ	հանձնարարությունը, - Շրջել դասարանում, օգնել և կառավարել անհատական աշխատանքները, - Ամփոփել հիմնական մտքերը, - Հարցադրումներ: Ուսուցիչը ուղղում է հարցեր աշակերտներին՝ դասի թեմայով Դասի ամփոփում: Կատարում է Միավորային գնահատում:	ուկնդրում, Զույգերի կազմում, Հարցերի կազմում, Ընդհանուր հացադրումների կատարում: Զույգային աշխտանքի կատարում Հարցերի պատասխանում: Դասի ամփոփում:	<<աշխարհ ագիր>> անցկացրեց Հայկական մարզպանությունում: Ինչպե՞ս են պատմիչները ներկայացնում Արևելյան Հայաստանի վիճակը պարսկական տիրապետության սաստկացման շրջանում: Մեթոդնե՝ Զրույցի մեթոդ Հարցադրման մեթոդ
Տնայի նաշխատանք 3-5ր		Նախապես թելադրված հարցերին պատասխանել՝ գրավոր:		